ՀՀ Արարատի մարզի Այնթապ համայնքի սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ- վաճառքի մասին հայտարարություն

2021 թվականի հոկտեմբերի 28-ին ժամը 10:00-ին Արարատի մարզի Այնթապի համայնքապետարանում տեղի կունենա համայնքային սեփականություն հանդիսացող հողերի աճուրդ-վաճառք:

Լոտ 1՝ Այնթապ համայնքի սեփականություն հանդիսացող, 03-012-0204-0005 կադաստրային ծածկագիրը կրող 0.20360 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահող, մեկնարկային գինը՝ 620.980 /վեց հարյուր քսան հազար ինը հարյուր ութսուն/ ՀՀ դրամ:

Լոտ 2 ՝ Այնթապ համայնքի սեփականություն հանդիսացող, 03-012-0204-0009 կադաստրային ծածկագիրը կրող 0.21159 հա գյուղատնտեսական նշանակության 3-րդ կարգի վարելահողը, մեկնարկային գինը՝ 645.350 /վեց հարյուր քառասունհինգ հազար երեք հարյուր հիսուն/ ՀՀ դրամ:

Լոտ 3՝ Այնթապ համայնքի սեփականություն հանդիսացող, 03-012-0335-0004 կադաստրային ծածկագիրը կրող 0.34587 հա գյուղատնտեսական նշանակության 5-րդ կարգի վարելահող, մեկնարկային գինը՝ 345 870 /երեք հարյուր քառասունհինգ հազար ութ հարյու յոթանասուն / ՀՀ դրամ:

Հողամասերի վաճառքը կնպաստի գյուղատնտեսական գործունեության զարգացմանը:

Նախավճարը յուրաքանչյուր լոտի մեկնարկային գնի 50% ի չափով և քայլի չափը՝ յուրաքանչյուր լոտի մեկնարկային գնի 5% ի չափով: Մասնակցության վճար՝ 20.000 /քսան հազար/ ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար, հայտին կից պետք է ներկայացնել՝

Ֆիզիկական անձի դեպքում անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցումը հաստատող փաստաթղթերի պատճենները.

Աճուրդի մասնակցության վճարի և նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթերը:

Հայտերն ընդունվում են մինչև ս/թ հոկտեմբերի 25-ը ժամը 10:00: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ Արարատի մարզի Այնթապի համայնքապետարան: Հասցեն՝ Այնթապ 6-րդ փողոց թիվ 47, հեռ 0236-6-05-06, 098-53-32-39, 077-13-03-16:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ